նացաք և ոչ ընտրեցաք, և ոչ հաստատեցաք քան բարի դեղ ցաւոյն փոփոխական բնութեան մերոյ 'ի ժամանակս առողջութեան անդամոց մերոց՝ այսինքն աննախանձաբար անկողմնակալութեան առանց յատուկ անձանց Շահաւէտութեան մտաց, թէ ոչ բոլորով անաչառ սրտիւ և 'ի զորութենէ բանական հոգոյ ընտրողութեամբ վասն հասարակաց բարութեան կարգս և յօրէնս ոչ դժուար և ոչ նեղութեամբ ոչ պակասութիւն ինչ 'ի կենաց մերոյ 'ի աշխարհիս և ոչ փաս հոգոյ մերոյ 'ի հանդերձելումն, թէ ոչ դիւրին քաղցրահամ հաճելի մեզ ամենեցունս առ 'ի համեմատութիւն աշխարհին և ազգին մերոյ Հայոց գեղեցկութիւն տեսողաց, սրբութիւն հասարակաց, հօվանաւորութիւն Շուք իշխանական և մեղմ և հանգստաբար կեանս, որպէս մանուկ բնակեալ 'ի յորովայնի մօր իւրոյ, զի սովաւ բառցի ամօթանք մեր, թէպէտ տխուր է իմ յիշեցուցանել զարշելի նախատինք ազգին մերոյ որում յուսեալ 'ի վերայ յուսոց մերոց կրեմք յարաժամ 'ի անօրինացէ, և ես ոչ յիշեցուցանեմ զամենայն զոր ես գիտեմ, եթէ ոչ միայնակ ձքեմ 'ի միտս ընթերցողիդ եթէ գուցէ գտցես դու այր բնակող ընդ հովանաւորութեան անօրինաց՝ երկայնամիտ լեր թէ զինչ բառիւ ձայնին յազգին Հայոց, փոխանակ անուան անյաղթելի թորգոմացւոց, և մեք Հայք որդիք քաջին Հայ-